

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Պարոն Արայիկ Հարությունյանին

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Լարիսա Մինասյանից
(ղիմողի անուն, ազգանուն)

ք. Երևան, Թումանյան 2-րդ փակուղի, 7/1 տուն
(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)

Բաց Հասարակության Ինստիտուտ Օժանդակության
Հիմնադրամ Հայաստան, 286.060.02879
(կազմակերպության լրիվ անվանումը, պեդ.գրանցման համարը)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդգրկել Բաց Հասարակության Հիմնադրամներ – Հայաստան կազմակերպությանը ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում Հիմնադրամի ծավալած գործունեության վերաբերյալ:
2. Մոտիվացիոն նամակ՝ հասարակական խորհրդում կազմակերպության ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ:
3. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:

Պիմող՝ Լարիսա Մինասյան, ԲՀՀ – Հայաստանի գործադիր տնօրեն
25 մայիսի 2018թ.

Մինասյան
Մասն. № 157577
05 18



Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան

Թումանյան փողոց 2-րդ փակ. տուն 7/1, Երևան, 375002 Հայաստան • Հեռ/Ֆաքս (374-10) 533862, 536758
• E-mail: info@osi.am • www.osi.am •

Գործադիր տնօրեն
Լարիսա Մինասյան

25 մայիսի, 2018թ.

ՀՀ կրթության և գիտության նախարար
Պարոն Արայիկ Հարությունյանին

Հարգելի՛ պարոն Հարությունյան,

Տնօրենների հորհուրդ

Դավիթ Խաչատուրյան
Նախագահ

Ռուբեն Բաբայան
Ինգա Ջարաֆյան
Վահրամ Սողոմոնյան
Արտակ Քյուրումյան

Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպությունը անցած ավելի քան 20 տարիների ընթացքում շարունակաբար աջակցել է կրթության ոլորտում տարբեր ծրագրերի իրականացմանը, որոնք, ի թիվս այլոց, նպատակաուղղված են եղել բարձրագույն կրթության որակի ապահովման քաղաքականության մշակմանն ու ներդրմանը ՀՀ բուհերում, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառմանը կրթության և հասարակության մեջ, առարկայական չափորոշիչների մշակմանը, և այլն:

Շարունակելով կարևորել կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունավետությունը, թափանցիկությունն ու բարեվարքությունը, 2013 թվականից ի վեր Հիմնադրամը նախաձեռնել և իրականացրել է մի շարք հետազոտություններ՝ բարձրագույն կրթության և հանրակրթության ոլորտներում իրականացված բարեփոխումների գնահատման նպատակով: Մինևույն ժամանակ, Հիմնադրամը մշտապես ակտիվ մասնակցություն է ունեցել կրթության ոլորտում վարվող քաղաքականության և իրականացվող բարեփոխումների մշտադիտարկմանը, առաջարկություններով է հանդես եկել քաղաքականության այնպիսի փաստաթղթերի վերաբերյալ, ինչպիսիք են Կրթության մինչև 2030թ. զարգացման ծրագիրը, Բարձրագույն կրթության մասին օրենքի նախագիծը, Կրթության ոլորտում հակակոռուպցիոն ռազմավարությունն ու գործողությունների ծրագիրը, և այլն:

Հաշվի առնելով Հիմնադրամի փորձը կրթության ոլորտում, ինչպես նաև փորձագիտական ու հետազոտական ռեսուրսները, որոնք ստեղծվել են անցած 5-6 տարիների ընթացքում, հավատացած ենք, որ ՀՀ Կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում Հիմնադրամի ընդգրկումը կնպաստի ոլորտի հետագա առաջընթացին ու առկա խնդիրների վերաբերյալ քննադատական դիսկուրսի ստեղծմանն ու զարգացմանը:

Հարգանքով՝

Լարիսա Մինասյան
Գործադիր տնօրեն

